ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լանջաղբյուր, (055) 889838, (093) 720506, lanjaghbyur.gegharquniq@mta.go

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 26

ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀօրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի

համայնքի ավագանին որոշեց՝

1. Հաստատել Լանջաղբյուր համայնքի 2018թ. բյուջեի նախագիծը

   ա) եկամուտների գծով՝ 58340.0 հազար դրամ,

   բ) ծախսերի գծով 58340.0 հազար դրամ,

   գ) հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ 0 դրամ:

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝համաձայն հատված 1-ի.

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական դասակարգման համաձայն հատված 2-ի.

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝համաձայն հատված 3-ի.

5. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝համաձայն հատված 4-ի.

6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝համաձայնհատված 5-ի.

7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման համաձայն հատված 6-ի.

8.Սահմանել վարչական բյուջեի պահուստային ֆոնդ 6000.0 հազ. դրամ և վարչական բյուջեի պահուստային ֆոնդից

ա) 5000.0 հազ. դրամ ուղղել ֆոնդային բյուջե՝ բաժին 06 խումբ 3 դաս 1 (Ջրամատակարարում) ծախսերի կատարման գործառական դասակարգման 5112 տնտեսագիտական հոդվածը ,

բ) 1000.0 հազ. դրամ բաժին 9 խումբ 1 դաս 1 (Նախադպրոցական կրթություն) բաժին 5113 տնտեսագիտական հոդված:

9. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀօրենքի 33-րդհոդվածի 3-րդ կետի համաձայն՝

ա) թույլատրել համայնքի ղեկավարին կատարելու բյուջեով իրականացվող յուրաքանչյուր ծրագրի գծով սահմանված գումարի 15% չափաքանակը չգերազանցող ներքին վերաբաշխումներ՝ ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,

բ) սահմանել, որ բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի միջև վերաբաշխումների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել այդ ծրագրերի համար հաստատված ընդհանուր գումարի 3 %-ը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՐԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ